

ՍԵՌԻ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԻՆ-ՍՈՑԻՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՔՎԻՆՏԷՍՏԵՆՑԻԱ

ՆԱԽԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
nairahambardzumyan@yahoo.com

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-338

Համառոտագիր

Հետազոտությունը քննում է իրանական *նոր պոեզիայի* և *նոր շարժման* ներկայացուցիչ, բանաստեղծուհի, արձակագիր, կինոռեժիսոր Ֆորուզ Ֆարրոխզադի պատմվածքները: Ֆորուզ Ֆարրոխզադը իր պատմվածքները գրել է 1957 թվականին: 2024 թվականին դրանք հայերեն է թարգմանել և առանձին գրքով («Վաղվա վիշտը») տպագրել է բանաստեղծ, թարգմանիչ Էդուարդ Հախվերդյանը: Աշխատանքի *նպատակն* է՝ Ֆ. Ֆարրոխզադի պատմվածքները վերլուծել կին-տղամարդ փոխհարաբերությունների վրա հայրիշխանական սոցիումի ներազդեցության համատեքստում: Հետազոտության խնդիրներն են՝ ա. մեկնաբանել Ֆորուզ Ֆարրոխզադի պատումները հայրիշխանական հասարակարգում կին-տղամարդ բի-նար սկիզբների ընկալումների ու զարգացումների տեսանկյունից, բ. բացահայտել *հայրիշխանության* և *բռնության* բաղադրիչները, գ. փնտրել գեղարվեստական տեքստում առկա ազգային արժեքների ներդրման ուղիները: Հետազոտության *գիտական նորոյթը* ա յն է , ո թ Ֆորուզ Ֆարրոխզադի պատմվածքները հայ իրականության մեջ հետազոտվել են առաջին անգամ: Աշխատանքի *արդիականությունը* պաշմանափորված է հետազոտվող նյութի պոետիկայի մոդեռնիստական աշխարհընկալմամբ, որը ենթադրում է ավանդական-ազգային տեքստից դուրս կնոջ սոցիալ-մշակութային կերպի քննարկումը: Սա օգնում է կնոջական տեքստը ուսումնասիրել նաև գրական փորձի խորհրդանշայնությունն արտացոլող ենթատեքստերի մեկնության տեսանկյունից: Նյութը վերլուծվել է գրականագիտության, ինչպես նաև հայ-իրանական սոցիալ-մշակութային փոխադարձ կապերի միջև փոխադարձ կապերի և առնչությունների համատեքստում՝ համապատասխան մեթոդների կիրառությամբ: Ֆորուզ Ֆարրոխզադի պատումների հոգեբանությունը քննվել է կին-տղամարդ փոխհարաբերություններում ազգային-ավանդական հայացքների դիմադարձության, կոնֆլիկտի մետաֆիզիկականության և տղամարդու իշխանության դրսևորման տեսանկյուններից: Հետազոտության արդյունքները և պատմվածքների այս ժողովածուն կարող են օգտակար լինել արևելագետների և գրականագետների համար, ինչպես նաև օգտագործվել բանասիրական ֆակուլտետների կրթական ծրագրերի իրականացման նպատակով:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Ֆորուզ Ֆարրոխզադ, գինոքննադատություն, գենդերային դիսկուրս, կին-տղամարդ փոխհարաբերություններ, ազգային-ավանդական հայացքներ, կանացիություն, առնականություն:

THE ONTOLOGY OF GENDER AS THE QUINTESSENCE OF THE CONFLICT BETWEEN WOMAN-SOCIETY

NAIRA HAMBARDZUMYAN

National Academy of Sciences of the RA
Institute of Literature after Manuk Abeghyan
PHD, Associate Professor,
nairahambardzumyan@yahoo.com

Abstract

This study examines the short stories by Forugh Farrokhzad, a representative of the new Iranian poetry and the latest literary movement, who was also a poet, prose writer, and film director. Forugh Farrokhzad wrote her short stories in 1957. In 2024, they were translated into Armenian and published as a separate book, “The Sorrow of Tomorrow,” by poet and translator Eduard Hakhverdyan. This study aims to analyse Forugh Farrokhzad’s short stories in the context of the patriarchal society’s influence on male–female relationships. The research objectives include: a) interpreting Forugh Farrokhzad’s narratives from the perspective of perceptions and developments of the male–female binary beginning within a patriarchal society, b) revealing the components of patriarchy and violence, c) analysing the ways national values are incorporated into the literary text. The *scientific novelty* of the research lies in the fact that Forugh Farrokhzad’s short stories are being studied for the first time in the Armenian reality. The modernist worldview determines the actuality of this work reflected in the poetic structure of the material under study, which implies discussing the socio–cultural image of women outside the traditional–national text. This approach enables the examination of women’s writing from the perspective of interpreting the subtexts that reflect the symbolism of literary experience. The material is analysed within the context of Literary Studies as well as Armenian–Iranian socio–cultural interrelations using appropriate methodologies. The psychological aspects of Forugh Farrokhzad’s narratives are examined from the perspectives of the opposition of national–traditional views in male–female relationships, the metaphysics of conflict, and the manifestation of male dominance. The research findings and this collection of short stories may be helpful to Orientalists and literary scholars, as well as for implementation in educational programs at philological faculties.

Keywords and phrases: Forugh Farrokhzad, gynocriticism, gender discourse, male–female relationships, national–traditional perspectives, femininity, masculinity.

ОНТОЛОГИЯ ПОЛА КАК КВИНТЭССЕНЦИЯ КОНФЛИКТА «ЖЕНЩИНА–СОЦИУМ»

НАИРА АМБАРЦУМЯН

Институт литературы им. М. Абеяна НАН РА,
кандидат филологических наук, доцент
nairahambardzumyan@yahoo.com

Аннотация

В исследовании проводится анализ рассказов Форуг Фаррохзад – представительницы иранской *новой поэзии* и *нового движения*, поэтессы, прозаика и кинорежиссера. Форуг Фаррохзад создала свои рассказы в 1957 году. В 2024 году они были переведены на армянский язык и изданы отдельной книгой («Завтрашняя грусть») поэтом и переводчиком Эдуардом Ахвердяном. Цель работы – рассмотреть рассказы Ф. Фаррохзад в контексте влияния патриархального общества на отношения между мужчинами и женщинами. Задачи исследования: а) интерпретировать рассказы Ф. Фаррохзад с точки зрения восприятия и развития бинарных начал «женщина–мужчина» в патриархальном обществе; б) определить компоненты *патриархата* и *насилия*; в) проанализировать способы внедрения национальных ценностей в художественный текст. Научная новизна исследования заключается в том, что рассказы Форуг Фаррохзад впервые изучаются в армянской действительности. Актуальность работы обусловлена модернистским мировоззренческим направлением поэтики исследуемого материала, который подразумевает анализ социокультурного образа женщины вне традиционно–национального текста. Этот подход поможет изучить «женский текст» с точки зрения интерпретации подтекстов, отражающих символику литературного опыта. Материал проанализирован в контексте литературоведения с учетом взаимосвязей и взаимоотношений, сформировавшихся на базе армяно–иранских социокультурных контактов. Психология рассказов Форуг Фаррохзад рассмотрена с позиций противодействия национально–традиционным взглядам, метафизики конфликта, проявления мужской власти в отношениях между полами. Результаты исследования и представленный сборник рассказов могут быть полезны востоковедам и литературоведам, а также студентам и преподавателям при реализации образовательных программ на филологических факультетах.

Ключевые слова: Форуг Фаррохзад, гинокритика, гендерный дискурс, отношения «женщина–мужчина», национально–традиционные взгляды, феминность, маскулинность.

Ներածություն

Հայտնի է, որ Ֆորուլ Ֆարրոխզադը իրանական *նոր պոեզիայի*⁵ հիմնադիրներից է, առաջին կին հեղինակը, ով շարունակում է Նիմա Յուշ⁶ ոճը: Ուսումնասիրելով Ֆարրոխզադի պատմվածքները՝ հնարավոր է արձանագրել, որ հեղինակը ժամանակակից իրանական գրականության մեջ ոչ միայն նորարար բանաստեղծուհի է, այլև արձակագիր: Նրա գրի ինքնատիպությունը ընթերցողների համար բացահայտում է կնոջական գրականության՝ նախկինում անհայտ շատ կողմեր՝ իրականության տարբերվող ընկալում, անձնական զգացմունքների ցուցադրություն, *կին-հասարակություն* կոնֆլիկտի նույնականացում, ևն: Ֆարրոխզադի երկերը հիմք դարձան նաև Իրանում գրական-քննադատական մտքի զարգացմանը՝ ընդլայնելով գրական հետազոտությունների շրջանակները և գրական երկի վերլուծության հարցում առաջադրելով հիմնովին նոր մոտեցում: Չնայած՝ իրանացի գրողները արագ արձագանքեցին կնոջական նոր գրականությանը, այնուամենայնիվ, դրանց գիտական մեկնաբանությունը, մեթոդաբանությունը և զարգացման հիմնախնդիրները որոշակիորեն հետաձգվեցին:

Հետազոտության օբյեկտը և մեթոդաբանությունը

Ուսումնասիրության առանցքում Ֆորուլ Ֆարրոխզադի՝ 1957 թվականին գրած պատմվածքներն են, որոնք 2024 թվականին հայերեն է թարգմանել և առանձին գրքով («Վաղվա վիշտը») տպագրել է բանաստեղծ, թարգմանիչ Էդուարդ Հախվերդյանը: Ուսումնասիրության *մեթոդաբանական* հիմքում ֆեմինիստական գրական քննադատության գործիքներն են: Տղամարդու կերպարի առկայությունը Ֆորուլ Ֆարրոխզադի պոեզիայում բնական և անհրաժեշտ պայման է սիրո փոխանցման համար, որպես հեղինակի կյանքի փիլիսոփայության քվինտեսենցիա: Այս հավաքական կերպարը զարգանում է իր՝ հեղինակի կայացմանը զուգահեռ: Նրա փորձառության կուտակման արդյունքում տեղի է ունենում ինքնագիտակցության կերպափոխում, որը ընթերցողին է փոխանցվում հեղինակի կողմից իրականության սուբյեկտիվ ընկալումների միջոցով: Ֆարրոխզադի պատմվածքներում տղամարդու կերպարը ունի կոնկրետ նյութական մարմնավորում, որի հայեցակարգային հիմքը կնոջ հուզական վիճակի պրոյեկցիան է: Կին-տղամարդ բինար սկիզբները Ֆորուլի պատումներում իրացվում են նրանց բնորոշ սոցիալական դերերի, մշակութային ու իմաստային-փիլիսոփայական ծածկագրերի, ավանդական հայրիշխանական աշխարհայացքի շրջանակներում: Իր պատումներում Ֆորուլը հրաժարվում է անդրոկենտրոնության փիլիսոփայությունից՝ ի ցույց

5 Իրանում՝ «she'r-e nou»: Գրական քննադատության մեջ այս տերմինը սովորաբար ընկալվում է ոչ միայն որպես չափածո նոր, ազատ ձև, այլև որպես նոր հիմնախնդիր, համաշխարհային երևույթների տեսական կամ պատկերացում, կամ բանավոր նյութի համակարգման մեթոդ: Գեղարվեստական այս շարժումը բնութագրվում է նաև առանձին հեղինակի իմաստային և բառապաշարային նորաբանությունների և պատահականությունների առատությամբ [5]:

6 Նիմա Յուշիջը (1895–1960) պարսիկ բանաստեղծ է, գրական քննադատ, արվեստագետ, հուշագիր, մանկագիր: Իրանական նորագույն պոեզիայի հիմնադիրն է [2, էջ 12–20]:

դնելով կնոջ և տղամարդու՝ միմյանց ձգտող ընդդիմությունը կամ երկփեղկ միասնականությունը, սեռերի բինար վերադասավորումը, արքետիպերի դասական բնութագրերը և դրանց որոշիչ հատկանիշների սինկրետացումը:

Ֆորուլ Ֆարրոխզադի պատումների հոգեբանությունը որպես ազգային-ավանդական հայացքների դիմադարձություն

20-րդ դարի երկրորդ կեսին Իրան հասնելով՝ ֆեմինիզմի ալիքը բախվեց ազգային-ավանդական հայացքների և կրոնի մեծ դիմադրությանը: Ֆեմինիզմի գաղափարները փիլիսոփայական և գիտական առաջատար դիրքեր չգրավեցին: Դրանք պարբերաբար ենթարկվեցին քննադատության՝ ավանդական արժեքները խաթարելու տեսանկյունից, հակասություններ ստեղծեցին Արևմուտքում ի հայտ եկած ուղղությունների հետ և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվեցին: Հետագայում, Իրանում նորոգվեցին ֆեմինիզմը և դրան առնչվող դիսկուրսը, սակայն *նոր շարժման* գերակայությունը արդեն ավարտին էր հասել: Իրանացի հետազոտողներ Փարվին Փայդարը, Սահբուրե Աբբասի-զադեն, Ալիաքբար Մեհդինը իրենց վերլուծություններում պնդում են, թե որոշ ժամանակ անց Իրանում, ֆեմինիզմը հարմարվել է տեղական մտածելակերպին և իրողություններին **[6]**: Այդ է պատճառը, որ սկզբնական շրջանում Ֆորուլ Ֆարրոխզադի երկերը վերլուծվել են ինքնակենսագրական տարրերով հարուստ *ինսիր* տեքստերի քննադատության համատեքստում: Դրանք վերլուծվել են հայրիշխանական հասարակության մեջ գերիշխող տղամարդու գիտակցության ֆիլտրով՝ անկախ գեղագիտությունից և գաղափարական հղումներից: Ֆարրոխզադի երկերում իրերը ու երևույթները, որպես կանոն, պատկերվում են մանրամասնորեն՝ առաջացնելով քննադատների ոչ անկողմնակալ գնահատականը, քանի որ Իրանի ավանդական և պահպանողական հասարակությունը պատրաստ չէր (և չէ) ցուցադրելու կնոջ հոգևոր բնության *բացությունը*: Պատումներում նկարագրված *սենյակի* միջավայրը որպես *յոկուս*, գերակշռող տրամադրությունները, հաղորդագրությունների ներքին ինտիմ-խոստովանական ենթատեքստերը, որոնք առաջադրում է հեղինակը, հետագայում իրենց ազդեցությունն են թողել նաև իրանացի այլ կին հեղինակների երկերի վրա: Դրանք թույլատրում են քննադատներին՝ կենտրոնանալ հիմնականում մշակութահենք հետազոտությունների վրա և ընդգծել հատկապես ֆեմինիստական տեքստի փիլիսոփայական, հոգեբանական, հոգեվեգվաբանական, մարդաբանական, ևն դրույթները:

Համաշխարհային էլեկտրոնային տարբեր հարթակներում և աղբյուրներում⁷ առկա հեղինակի կենսապատումը թույլ է տալիս ընդգծել փաստը, թե Ֆորուլ Ֆարրոխզադը իր կենսափորձը մեծ տաղանդով արտացոլել է նաև իր երկերում: Թեև նրա պատմվածքները շրջանակված են պարսկական դասական գրականության փիլիսոփայությանը հատուկ կանոններով, այնուամենայնիվ, խորքում ամփոփում են *էրոսիկ պայրումի* մտերմիկ շնչառությունը: Այն քողարկվում է ասացման նուրբ շղարշով՝ հետազոտողների համար բացելով մեկնաբանական նոր՝ կնոջական ինքնության գաղտնագրված

7 ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, ևն:

էթնոմշակութային տիրույթը: Սույն երևույթի իրական ընկալումը, սակայն, իրանական գրականության մեջ որոշակի դժվարություններ է ստեղծում երկու սեռերի հակադրության պատճառով: Ինչ վերաբերում է Ֆարրոխզադի երկերին, ապա հարցը քննելի է կնոջական գրականության մեջ *լինելության* գաղափարի և *կնոջ սուբյեկտության* հաստատման տիրույթներում:

Այսպես, կնոջ էության բազմակիությունը և զգայականությունը, մայրական բնագոյը, կնոջ ճակատագիրը, ներկայությունը սոցիումում, Ֆարրոխզադի պատումներում դրսևորվում են անձնական իրերի, հագուստի և արդուզարդի նկարագրությունների միջոցով՝ «Վազեց դեպի հագուստների պահարանը: Այն քեզ բան, ո՞նց էի մոռացել: Հիմա էս խոիվ, երկար մազերի ու սփրթնած, փքված դեմքի հետ ի՞նչ անի: Հագուստներից ոչ մեկը արդուկված չէր: Անհանգիստ կանգնեց սենյակի կենտրոնում և երբ քույրը թակեց դուռը միննույն ժամանակ, որ խելագարի պես պտտվում էր իր շուրջը և սանրն էր փնտրում՝ բղավեց. –Դու իջիր, հիմա կգամ, շորերս եմ հագնում» [3]: Որոշ պատումներում հեղինակը բացահայտում է կին–տղամարդ քաղաքացիական իրավունքի և սոցիալական հավասարության շուրջ ֆեմինիստականգաղափարները, ակտիվորեն խրախուսում է կանանց պայքարել իրենց իրավունքների համար՝ առաջարկելով տղամարդկանց հետ փոխհարաբերություններում ի ցույց դնել առավել կոշտ վարքագիծ:

Կոնֆլիկտի մետաֆիզիկականությունը կին–տղամարդ փոխհարաբերություններում

Ֆորուդի պատմվածքներում երկու սեռերի միջև կոնֆլիկտը չի պատկերվում միայն *սոցիալական* բնույթով. այն նաև պարունակում է անձնական և քաղաքական խորքային շեշտեր, որոնք կարծես քողարկված են այնկողմնային, վերիրական շղարշով, հետևաբար, առավելապես *մետաֆիզիկականության* տիրույթում են: Սույն հանգամանքը իրավապես ընդգծվում է «Պարտություն» պատմվածքում, որում երիտասարդ տղամարդը որպես ինքնասեր ոչ սոցիալական էակ, սիրային փոխհարաբերություններում հաճախ իրենից անջատում է ընտանիքի, սիրած կնոջ մասին հոգալու կամ պատասխանատու լինելու գաղափարները՝ «Ձեռքը երկարեց, սեղմեց սեղանի վրա դրված լուսամփոփի կոճակը և պահարանի գզրոցից վերցրեց տղայի նամակը և հարյուրերորդ անգամվա համար կարդաց՝ «Կներես, շատ եմ ցավում, որ ստիպված եմ այս նամակը քեզ գրել: Խնդրում եմ այսուհետ իմ մասին չմտածես: Իհարկե գիտեմ, որ շատ կոխքես, բայց կիրակի օրը, երբ **հայրդ** ինձ ու քեզ միասին տեսավ պաղպաղականոցում, բողոքել է **հայրիկիս** և **հայրս** շատ է կռվել ինձ հետ: Իհարկե, քեզ համար էլ լավ չի, **հայրս** ձիշտ է ասում: Իհարկե, մենք պետք է մեր դասերով զբաղվենք, որովհետև առաջին եռամսյակի քնությունները շուտով սկսվելու են: Խնդրում եմ այսուհետև ինձ չբարևես փողոցում: Իհարկե, ինձ կներես, չկարծես, որ քեզանից կշտացել եմ: Ո՛վ իմ նամակ, որ գնում ես դեպի նա, Դու իմ կողմից պի՛նդ համբուրիր այտը նրա»: Անգուստ լացի հեկեկոցը խեղդեց կոկորդում: Նամակը ձգմեց ափի մեջ և նետեց անպետք թղթերի զամբյուղը» [3]:

Մեջբերվող տեքստի ընթերցումից պարզվում է նաև մեկ այլ հանգամանք. սոցիումը կառավարում են տղամարդիկ, և իրավիճակը տոտալ–

հայրիշխանական է: Երիտասարդ տղան ուղղակիորեն ենթարկվում է իր և սիրած աղջկա *հայրերի* պահանջներին: Մեկ պարբերության մեջ Ֆարրոխզադը *հայր* բառը օգտագործել է չորս անգամ: Այսօրինակ այուժեները Ֆորուղի պատմվածքներում անվերջ փոխներթափանցվող են, ինչպես որ անվերջ է ինքը՝ կյանքը: Այդ է պատճառը, որ կնոջ կերպարի պատկերումը տեղի է ունենում Ֆորուղի անուղղակի բնութագրերի միջոցով: Խոսքը իրականում կնոջը ինչ-որ նշանով փոխարինելու մասին չէ, այլ *կանացի ձայնի* ու *աշխարհի*՝ մաքուր կանացի վախերով, խնդիրներով ու հարցադրումներով, աշխարհի, որտեղ առկա են սիրո և ընտանիքի համար զոհաբերության պատրաստ կանայք («Պարտություն»), հիվանդացող ու մահացող երեխաների հանդեպ սերը («Իմ փոքրիկ ընկերը»), թուլամորթ կամ բռնապետ տղամարդիկ («Վերջը»), ինչպիսին որ տեսնում են նրանց կանայք: Ամենից առաջ, սակայն, Ֆորուղի պատմվածքներում, բացահայտվում է աշխարհի ժամանակակից պատկերը, որտեղ առանցքային է *կին-տղամարդ կոնֆլիկտը*՝ «Մտածեց՝ «Մեր բոլոր ծրագրերը փչացան»: <...> -Մայրս ձիշտ էր ասում, տղամարդիկ զուրկ են հավատարմությունից» [3]:

Ֆորուղի պատմվածքներում կոնֆլիկտները հաճախ ներկայանում են որպես իմաստային ընդդիմություն, այսինքն՝ բացահայտվում են հերոսների վարքագծի մակարդակում՝ առանց կոնֆլիկտի ներքին կողմը ներկայացնելու (*ինչո՞ւ է այդպես*–ը չի ներկայացվում, միայն՝ հետևանքը): Այս դեպքում ընթերցողին հնարավորություն է տրվում տարանջատել տղամարդու ու կնոջ փոխհարաբերությունների սցենարը, որտեղ առաջինը ակնկալում է *երկրպագություն* և *հիացմունք*, իսկ երկրորդը ցանկանում է իրացնել իր *պաշտպանվածության* պահանջմունքը և վայելել սեփական ընտրության բացառիկությունը: Ֆորուղ Ֆարրոխզադը արտացոլում է նահապետական ավանդույթների ու սովորույթների դարձերեսները, և կնոջ աններդաշնակությունը այդ մշակություն: Նա ուսումնասիրում է կնոջ բարությունն ու անշահախնդրությունը, ով միշտ պատրաստ է օգնելու տղամարդուն (և ոչ միայն), ով կարեկից է և սրտացավ, զգայուն է այլոց խնդիրների նկատմամբ:

«Միձավանջ» պատմվածքում առկա է արժեքների որոշակի աստիճանակարգում, ըստ որի կյանքի իրավունքը պաշտպանվում է *համաձայն տղամարդկանց հայացքների*: Այս հանգամանքը նպաստում է իրավիճակային ընդհանուր կոնֆլիկտների ստեղծմանը ինչպես կյանքում, այնպես էլ գրականության մեջ: Տղամարդը գերակա է ոչ միայն մտավոր, այլև ֆիզիկական ցանկություններում: Պատմվածքի այուժեի առանցքում կնոջ և տղամարդու մերձեցման, սեքսի պատկերումն է, որին ակամա ականատես է լինում նրանց անչափահաս որդին՝ «Նորից լսվեցին մոր հառաչանքները: Նա զարմացած ինքն իրեն հարցրեց. «Բնջ է արել մայրիկը, ինչու՞ է հայրիկը այդքան նեղացնում նրան: Ինչու՞ մայրիկը չի բղավում, գուցե հայրիկը թաշկինակով փակել է բերանը: <...> «Չի՞ թողնում... չի՞ թողնում մայրիկը բղավի...» [1, էջ 121–124]:

Ուշագրավ է, որ գեղարվեստական տարածությունը ծնողներից որդի մեկ սենյակի լոկուսում է, որը հեղինակի կողմից արդարացվում է հանգստարանային քաղաքի պայմաններով: Սենյակը որպես լոկուս բացահայտվում է առանձին պատկերով: Այն, ինչը հաղորդվում է ընթերցողին,

հեղինակի կողմից ավելացվում է հենց այդ պահին: Տարածության խնդիրը և երեխաներին այնտեղ քնելու թույլտվություն տալու հանգամանքը հատուկ են շեշտվում՝ ընդգծելով պատումի ավանդական հայրիշխանական թեման: Ֆորուլի թեմայի գեղագիտությունը սահմանվում է նրանով, որ այն ներկայացվում է մանրամասների առատությամբ, ինչը կնոջական պոետիկայի հատկանիշ է: «Միձավանջ» պատմվածքում կինը և տղամարդը բնութագրվում են վարքագծի բինար տիպաբանական հատկանիշներով: Նահապետական ավանդույթում տան պարտականությունները վերագրվում են կնոջը (այդ թվում՝ խոհանոցը), դրանցով է բնորոշվում նրա նշանակությունը կին-տղամարդ փոխհարաբերություններում: Դրանցով են արտացոլվում նաև հասարակության մեջ կնոջ և տղամարդու դերերի գնահատության և ձևավորման սոցիալական, պատմամշակութային և քաղաքական բարդ գործընթացները՝ ընդգծելով նրանց վարքագծի, մտածելակերպի և հուզական բնութագրերի տարբերությունները: Ֆարրոխզադը ձգտում է ոչ թե պարզապես տարբեր կոնֆլիկտները գեղարվեստորեն ընթերցողների դատին հանձնել, այլ դրանք լուծել իր պատումներում բարոյականության ու մարդկայնության տեսանկյուններից:

Հոգևորի ու ֆիզիկականի հակադրությունը որպես էքզիստենցիալ փակուղի

Ֆորուլ Ֆարրոխզադի երկերին բնորոշ են հոգևորի և ֆիզիկականի, երկնայինի ու երկրայինի փոխներթափանցումները: Ըստ հեղինակի՝ ամենայն հոգևորը սկիզբնավորվում է կնոջից, քանի որ միայն կնոջն են բնորոշ անհանգստությունները, տանջանքները և հոգեկան տառապանքները: Առանձնացնելով հիմնախնդիրները և բաժանելով սոցիալական ու քաղաքացիական դերերը՝ հեղինակը առաջնորդվում է աշխարհում գերիշխող հայրիշխանական ըմբռնումով՝ ամուսինը պատասխանատու է ընտանիքի նյութական վիճակի համար, իսկ կինը տան առողջ հուզական և հոգևոր մթնոլորտը ստեղծողն է: Հանդիպում են նաև ինքնախարազանման պատկերներ, որոնցում հեղինակը կիսում է բաժանման միջև մեղքը գործողի և մեղավորի՝ իրեն ոչ բնորոշ կերպարը: Հեղինակի ներկայությունը գրկում է պատմվածքի հերոսուհուն գեղարվեստական նյութում կանացի սկիզբը լիարժեքորեն դրսևորելու հնարավորությունից, թեև նրան հաղորդվում է մշակութային բազմակիություն և անհավասարակշռություն, օժտելով կանացիին բնորոշ հոգեկան հատկանիշներով և նրա համար անսովոր դերով:

Ֆարրոխզադի պատումներում չափազանց հազվադեպ են տղամարդու այնպիսի նկարագրությունները, որոնք *ա-փիսիկ* են նրա տեքստերի համար: Ստեղծագործելու ընթացքում հեղինակի կողմից պատմվածքի հերոսի իդեալականացման հնարքները ընկալվում են որպես հեղինակի մտածողության *սևցում* սովորականի սահմաններից՝ ընթերցողին ուղղորդելով դեպի իրականության առավել խորը ընկալումը: Անցյալի հիշողությունները, ավարտված սերը, անհուսության ներքին զգացումը, զուգընկերոջ հետ հոգևոր միասնության խորը աղձատումը վերակենդանացնում են կնոջ հոգու ցավը: Այդպիսի պայմաններում է «Վերջը» պատմվածքի հերոսուհին՝ «Կինը տրտմագին ասաց՝ -Եվ եթե մի տղամարդ կասի, որ սիրում է քեզ, երբեք մի

ակնկալիր, որ մշտապես քեզ կսիրի, նույնիսկ, մինչև վաղը քեզ կսիրի: Հենց այն մի պահը, հենց այն մի պահը, որ քեզ սիրում է, ընկալիր, հասկանում ես» [3]:

«Վերջը» պատմվածքը նույնպես գրվել է 1957 թվականին: Այն բացահայտում է հեղինակի հոգեկան ապրումները, ով սկզբունքորեն անհամաձայնություն հայտնելով՝ հաստատում է սոցիալ-մշակութային և պատմաքաղաքական հիմնախնդիրների առկայությունը: Շրջապատող իրականությունը, և այդ իրականության մեջ կնոջը պարտադրված հուսահատ գոյությունը, կնոջ՝ այն փոխելու ճիգերը ընթերցողին փոխանցելու նպատակով Ֆորուդը հերոսների զգացմունքները պատկերում է հոռետեսական երանգներով՝ «Բոլոր այն ճանապարհները, որ նրան կապում էր տղամարդուն՝ ավարտվել էին, բոլոր այն փողոցները, որ վերջանում էին նրա տան մոտ, այն սանդուղքները, որ հասնում էին նրա սենյակի ետևը, նույնիսկ թվում էր, որ դռան զանգն էլ անսարք է և իր էությունը այլևս ի գործու չէ, որպեսզի խախտի սենյակի խեղդող ու ծանր լույթությունը, և աչքերի փայլքը խավարը չէր ձեռքում» [3]: Մենակության և անպատասխան սիրո պատկերները աշխարհագրական առումով առավել ընդգրկուն են դարձնում պատումի փիլիսոփայությունը՝ «Այն զգացումը, որ քեզ քարշ է տալիս նրա ետևից՝ սեր չէ... սեր չէ: Նա հասել է վերջին, նա հագեցել է, իսկ դու դեռևս ծարավ ես» [3]:

«Վերջը» պատմվածքում ավարտվում են հերոսուհու որոնումները, որոնց շնորհիվ նա զգացմունքների փոխադարձություն էր փնտրում, և այն բոլոր հարցերի պատասխանները, որոնք տանջում էին նրան: Հեղինակի և հերոսուհու աչքերով տեսնում ենք սիրուց ու կենսականությունից զուրկ առօրեական կյանքը: Թվում է՝ հերոսուհուց մնացել է միայն արտաքին պատյանը, ներաշխարհը ամբողջությամբ այրվել է՝ այդպես էլ չնորոգված սիրուց, և զգացմունքների հարահոսում նա գրկվել է կյանքը լիարժեքորեն զգալու և ապրելու հնարավորությունից, քանի որ տղամարդու տոտալ իշխանության ներքո է: Նա տխուր ու հանգիստ ամփոփում է կյանքը՝ *ներքին հյուծվածություն, հուզական մահ և դալարկություն*՝ «Հավերժությունը ինչի մեջ ես փնտրում, անցյալը գերեզմանոց է» [3]: Միայլ, այդ մոայլ գոյությունը և անտարբերությունը կնոջ համար գրոշի արժեք չունի, և նա իր աննշան կյանքը դնում է իր սիրելիի առջև: Սակայն սերն ու կյանքը անբաժան են: Սա միակ բանն է, որ հեղինակի համար արժեքավոր է և անպարտելի: Ֆորուդ Ֆարրոխզադի ոչ միայն բանաստեղծությունները, այլև պատումները խոստովանության նման են, Սուրբ գրքի պես են, նրա հավատքի պես⁸:

Քննարկում և արդյունքներ

Հերոսուհիների հոգեբանական-հուզական և զգայական վիճակները Ֆորուդ Ֆարրոխզադի պատմվածքներում արտացոլում են բարդ հարաբե-

8 Պատահական չէ, որ Ֆորուդը հաճախ հրաժարվում է ընդունված բառապաշարից, սակայն իր երկերում գործածում է *այե* («այաթ») հասկացությունը, որը բնորոշ չէ նոր գրականությանը, ավելին, այն հաճախ գործածվում է Սուրբ Դուրանի ամենամիտքը կառուցվածքային միավորը նշելու նպատակով: *Այե* նշանակում է՝ *նշան, նախանշան, հայրնություն, հրաշք*: Սա զգալիորեն ընդլայնում է ընթերցողի զգայությունների շրջանակը: Իրանացի գրաքննադատ Մ. Նուշմանդը առաջարկում է *այե* բառի այլ մեկնաբանություն՝ *գիշեր, օր, արշալույս (սահարզահ) հակապայակեր* [7]: Ըստ գրաքննադատի՝ չի կարելի սահմանափակվել այդ բառի *ժամանակավոր ընթացք*, իմաստով [8]:

րությունները այն տղամարդկանց հետ, ովքեր կյանքի տարբեր փուլերում այս կամ այն կերպ առնչվել են հեղինակին՝ ամուսինը՝ Փարվիզ Շապուրը, ում հետ նա ամուսնալուծվել է երեք տարի անց, որդին՝ Քամյարը, որին չեն թույլատրել տեսակցել մոր հետ, և կինոպրոդյուսեր Էբրահիմ Գոլեստանին, ով դարձավ նրա երկրորդ և վերջին սերը **[4, էջ 179–188]**։ Ֆորուլի նամակներից հայտնի է, որ նրա հայրը՝ Մոհամմադ Ֆարրոխզադը, ով Ռեզա շահի օրոք ծառայում էր որպես գնդապետ, չի ընդունել դստեր ստեղծագործելու փաստը և հսկայական հոգեբանական ճնշումներ է գործադրել՝ ոտնահարելով ազատության և անկախության նրա բնական ձգտումները⁹։ Տղամարդու ներկայությունը բացահայտվում է Ֆորուլի գրեթե բոլոր երկերում՝ որպես իրական սիրո առարկա, որպես որոշակի գեղագիտական իդեալի ու փորձի մեկնաբանություն։ Առնականության այս հավաքական կերպարը նրա պատումներում տարաբնույթ է և ներկայանում է տարբեր դեմքերով։ Կենսափորձի և ինքնագիտակցության ձևավորմանը զուգահեռ, նա կուտակում է և ընթերցողին է փոխանցում աշխարհ-պատկերի իր ընկալումները։

Կնոջ ինքնագիտակցությունը և տղամարդու հետ փոխհարաբերությունները պատկերող հատվածները Ֆորուլի պատմվածքներում ընկալվում են որպես մեղմ բողոք։ Ինչպես տղամարդուն, այնպես էլ կնոջը խորթ չեն անկախության և ինքնաներկայացման զգացմունքները ու ցանկությունները։ Ֆորուլի պատմվածքներում տղամարդ հերոսը գերակա չէ իմաստի տիրույթում, այլ՝ իշխանության։ Պատմվածքների դիպաշարերում առկա չէ տղամարդու անմիջական խոսքը կամ հստակ դիմանկարը։ Այն Ֆորուլի հուզական և զգայական ազդակների գերակշռության արդյունքն է։ Այդ է պատճառը, որ ընթերցողը ու քննադատը հնարավորություն ունեն տեքստի ներքին տիրույթում ստեղծելու լրացուցիչ իմաստներ՝ անդրադառնալով ուղեկցող հանգամանքներին, ինչպես նաև՝ հեղինակի հոգե-հուզական վիճակներին և կենսափորձին։

1998 թվականին երևանյան «Նոր-Դար» հանդեսում բանաստեղծ, թարգմանիչ Էդուարդ Հախվերդյանի թարգմանությամբ տպագրվել է «Միձավանջ» պատմվածքը, որը Ֆորուլ Ֆարրոխզադի հայերեն փոխադրված առաջին արձակ երկն էր հայ իրականության մեջ¹⁰։ Այն արտացոլում է տղամարդու անփոփոխելի ներկայությունը կնոջ կյանքում որպես ֆիզիկական սիրո դրսևորման կարևոր բաղկացուցիչ։ Ֆորուլի պատմվածքները ունեն ողբերգական երանգ։ Տղամարդու կերպարը դրանցում հաճախ օժտված է բացասական հատկանիշներով՝ անհավատարմություն, անազնվություն, անտարբերություն, երկդիմություն, թուլություն։ Այն կնոջը գայթակղելու և հողի վրա հնարավորինս երկար պահելու նպատակն է հետապնդում։ Կին-տղամարդ բինար փոխհարաբերությունները «Միձավանջ» պատմվածքում արտահայտվում են մարմնի ազդակների (որպես նյութական սկիզբ) միջոցով՝ համբույր, կիրք, հառաչ։

9 Տե՛ս Ֆորուլի նամակները։

10 «Միձավանջ» պատմվածքի թարգմանությունից հետո Էդուարդ Հախվերդյանը թարգմանել է ևս 5 պատմվածքներ, որոնք դեռևս տպագրված չեն, և առաջին անգամ հրատարակվել են «Վաղվա վիշտը» ժողովածուով՝ 2024 թվականին **[4, էջ. 179–188], [3]**։

Եզրակացություն

Մարդկային հուզական ներաշխարհը Ֆորուդ Ֆարրոխզադը պատկերում է՝ ընթերցողին ուղղորդելով կյանքի դժվարությունները հաղթահարելու փորձերի միջով: Նա բացահայտում է կարևոր գոյաբանական հիմնախնդիրներ՝ դիպուկ և հանգամանակից բնութագրելով դրանք իր բոլոր՝ «Միձավանջ», «Պարտություն», «Անտարբեր», «Վաղվա հոգսը», «Իմ փոքրիկ ընկերը», «Վերջը» պատմվածքներում: Ֆորուդի պատմվածքներում տղամարդու կերպարը բնական և անհրաժեշտ պայման է սիրո փոխանցման համար: Նա տղամարդու միջոցով ոչ միայն ներկայացնում է ավանդական միջավայրի իշխանությունը, այլև ճանաչում ու հաստատում է իր *ես*-ը կնոջ սուբյեկտության սահմաններում:

Հարկ է նշել, որ Ֆորուդի պատմվածքներում տղամարդու կերպարը հստակ է, սակայն բանաստեղծություններում գուրկ է կոնկրետ նյութականությունից: Այդ կերպարը օժտված է հիմնականում բացասական հատկանիշներով, և դրա հայեցակարգային հիմքը կնոջ հուզական վիճակի պրոյեկցիան է: Պատումներում, ավանդական հայրիշխանական աշխարհայացքի շրջանակներում, ընթերցողին պատկերվում են նաև կնոջ և տղամարդու արքետիպային դրսևորումները, նրանց բնորոշ դերերը, հայրիշխանական սոցիումի էթնոմշակութային ծածկագրերը: Նշենք նաև, որ իրանացի կնոջ ձայնը առաջին անգամ Ֆորուդի երկերում է բարձրանալով գերիշխում իր ժամանակի սոցիալ-մշակութային մթնոլորտում՝ խախտելով տղամարդկանց գերակայության ավանդույթը, նրանց սահմանած իշխանությունը և ուժը ինչպես գրականության, այնպես էլ հասարակական գիտակցության տիրույթում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Նոր-Դար», «Միձավանջ», Ե., 1998, թիվ 4, էջ 121-124:
2. Ոսկե գմբեթ (Ժամանակակից իրանական պոեզիա), թարգմ. Էդուարդ Հախվերդյանի, Ե., Հայաստան, 2004, էջ 12-20:
3. Ֆարրոխզադ Ֆ., Վաղվա վիշտը, 2024, Թարգմ. Է. Հախվերդյան, խմբագիր և վերջաբանի հեղինակ՝ Նաիրա Համբարձումյան, «Անտարես» հրատ., 130 էջ:
4. Березина А., Малоизвестный гений Фору́г Фаррохзад: Филологические науки в Мгимо. 2016. № 8: 179-188.
5. Кляшторина В. Б. Новая поэзия в Иране, Москва, Наука, 1975, 254 с.
6. Намаз И. Помни полёт: Тегеран: Мехре-борна, 2005. 282 с.
7. Нушманд М. Анализ стихотворения «Второе рождение» Фору́г Фаррохзад [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.rezаноoshmand.blogfa.com/post-421.aspx> (дата обращения: 10.12.2016).
8. Персидско-русский словарь: в 2 т. Т. 1, под ред. Ю. А. Рубинчика. Москва: Сов. энцикл., 1970. с. 147.